Հաստատված է
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Վարչության
04.03.2022թ. թիվ 43/02-04.03.22 որոշման Հավելված 1-ով

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԹՎԱՅՆԱՑՎԱԾ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ (Terms and Conditions) ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

1. Սահմանումներ և հասկացություններ

- **Բանկ՝** «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
- **Քարտ՝** Բանկի կողմից Հաճախորդի համար թողարկվող Visa International միջազգային վճարային համակարգի քարտ
- **Նույնականացում՝** Բանկի կողմից Հաճախորդի ինքնության ստուգման և հաստատման պարտադիր գործընթաց: Հաճախորդի նույնականացումը Բանկի հետ առերես շփմամբ գործարքների կատարման դեպքում իրականացվում է Հաճախորդի կողմից ներկայացվող անձը հաստատող փաստաթղթի հիման վրա: Հաճախորդի նույնականացումը Բանկի հետ ոչ առերես շփմամբ իրականացվող գործարքների (էլեկտրոնային գործառնությունների միջոցով) դեպքում՝ կատարվում է Հաճախորդի նույնականացման տվյալի կիրառումով:
- **Հաճախորդի նույնականացման տվյալ՝** էլեկտրոնային միջավայրում կամ Բանկի հետ ոչ առերես շփմամբ կիրառելու համար նախատեսվող Հաճախորդին նույնականացնող տվյալ՝ PIN կոդ (գաղտնի ծածկագիր), քարտի CVV կոդ, նշանաբառ, գաղտնաբառ և/կամ այլ միջոց, որի կիրառումով Հաճախորդը համարվում է նույնականացված:
- **Առևտրի և սպասարկման կետ**(այսուհետ՝ ԱՍԿ)**՝ Բանկի** Գործընկեր, ում մոտ Բանկը տեղադրել, ակտիվացրել է POS/ՀԴՄ(POS)/Վիրտուալ POS տերմինալներ (այսուհետ՝ Տերմինալ):
- **Թվայնացված քարտ (Token)**՝ Քարտի թվային նույնականացուցիչ, որը Հաճախորդն ակտիվացրել է Բջջային հավելվածում և/կամ Վճարային դրամապանակում՝ հեռավար գործարքներ և/կամ անհպում գործարքներ կատարելու համար: Այն եզակի թվային կոդ է, որը գեներացվել է Վճարային համակարգի կողմից և հանդիսանում է քարտի լրացուցիչ ռեկվիզիտ,
- **Քարտի թոքենացումը (Tokenization)**՝ քարտի գաղտնի տվյալների փոխանակման տեխնոլոգիա հատուկ անառարկայական համարժեքի հետ:
- **Բջջային հավելված**՝ ծրագրակազմ (AEB Mobile, Apple Pay), որը տեղադրված է Բջջային սարքում և օգտագործում է service provider տեխնոլոգիան, որի բացառիկ իրավունքները պատկանում են տվյալ ծառայության Մատակարարին: Բջջային հավելվածի ֆունկցիոնալությունը, դրա օգտագործման պայմանները և Բջջային հավելվածից օգտվելու իրավունքների տրամադրման կարգը սահմանում է տվյալ ծառայության Մատակարարը:
- **Մատակարար**՝ ընկերություն, որը վճարային համակարգի կանոնների և/կամ վճարային համակարգի հետ առանձին պայմանագրի հիման վրա մատուցում է անհրաժեշտ տեղեկատվական և տեխնոլոգիական ապահովում Բջջային հավելվածում թվայնացված քարտի գրանցման, օգտագործման և հեռացման համար
- **NFC (Near field communication)**՝ կարճ հեռավորության վրա (մոտ 10 սանտիմետր) սարքերի միջև անլար տվյալների փոխանցման տեխնոլոգիա:
- **NFC վճարումներ՝** անհպում վճարումներ, որոնք կատարվում են AEB Mobile հավելվածի և/կամ այլ համակարգի միջոցով, որոնք տեղադրված են Բջջային սարքում:
- **Էլեկտրոնային պատկեր**՝ Բջջային հավելվածում էլեկտրոնային ձևով գրանցված Քարտի պատկեր, որը պարունակում է Քարտի համարի վերջին 4 թվանշանները, Բանկի և վճարային համակարգի լոգոն:
- **«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ** բանկային ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանների վերաբերյալ կարող եք ծանոթանալ այցելելով հետևյալ հղմամբ ՝ https://aeb.am/hy/sakagner/

2. Գործաքների հիմնական սկզբունքերը

2.1 Քարտի թոքենացումը (Tokenization) և Բանկի հավելվածով անհպում և/կամ հեռահար գործարքներ իրականացումը:

2.1.1 Թոքենացումը հնարավոր է իրականացնել Բանկի կողմից թողարկված VISA International միջազգային վճարային համակարգի քարտատեսակներով:

2.1.2 Հաճախորդը կարող է միաժամանակ թոքենացել մեկից ավելի քարտեր Բջջային սարքում:

2.1.3 Բջջային սարքով հնարավոր է իրականացնել NFC վճարումներ, եթե վերջինս ապահովված է ապակողպման անվտանգության համակարգերից որևէ մեկով (մատնահետք, FaceID, PIN),

2.1.4 Բջջային հավելվածում Հաճախորդին հնարավորություն է տրվում ակտիվացնել/գրանցել թվայնացված քարտ և դրան համապատասխան էլեկտրոնային պատկերը, ինչի համար Հաճախորդը.

2.1.4.1 Մուտքագրում է Քարտի վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը Բջջային հավելվածում՝ հետևելով հավելվածի ինտերֆեյսի ցուցումներին:

2.1.4.2 Ընդունում է ծառայության Մատակարարի պայմանները և այլ պայմաններ (եթե կիրառելի են)՝ Բջջային հավելվածի պայմաններին համապատասխան:

2.1.4.3 Տալիս է համաձայնություն թվայնացված վճարային քարտի թողարկման և գործարքների կատարման պայմաններին:

2.1.4.4 Բանկի կողմից Քարտի հաջող վավերացումից հետո Բջջային հավելվածը հաճախորդին առաջարկում է անցնել նույնականացում՝ Բջջային հավելվածում մուտքագրելով մեկանգամյա գաղտնաբառը, որը ստացվել է համապատասխան SMS հաղորդագրության կամ էլ. փոստի միջոցով:

2.1.4.5 Հաստատում է Բջջային հավելվածի կողմից առաջարկվող Հաճախորդի նույնականացման մեթոդը (օրինակ՝ մուտքագրելով մեկանգամյա գաղտնաբառ, որն ուղարկվել է որպես SMS հաղորդագրություն):

2.1.4.6 Հաճախորդի հաջող նույնականացումից հետո Բջջային հավելվածը տեղեկացնում է թվայնացված քարտի ակտիվացման/գրանցման փաստի մասին և բեռնում է համապատասխան էլեկտրոնային պատկերը:

2.1.5 Հաճախորդի քարտի տվյալների անվտանգությունը քարտի թոքենիզացիայի գործընթացում երաշխավորված է Visa International վճարային համակարգի կողմից:

2.2 ԱՍԿ-ներում անհպում գործարք իրականացնելու համար Հաճախորդը պետք է կատարի ներքնոշյալ գործողությունները.

2.2.1 ստուգում է վճարման գումարը ԱՍԿ-ի Pos տերմինալի էկրանին:

2.2.2 մուտքագրում է նույնականացման (կենսաչափական) տվյալները շարժական սարքում՝ Բջջային հավելվածն ակտիվացնելու համար:

2.2.3 անհրաժեշտության դեպքում, Բջջային հավելվածում ընտրում է համապատասխան Թվայնացված քարտի էլեկտրոնային պատկերը, որով ցանկանում է կատարել վճարման գործարքը,

2.2.4 բջջային սարքը մոտեցնում է Pos տերմինալին՝ տվյալների փոխանցման համար,

2.2.5 թվայնացված քարտի միջոցով գործարք կատարելու համար որոշ դեպքերում Հաճախորդից կարող է պահանջվել հաստատել գործարքը՝ լրացուցիչ մուտքագրելով Քարտի PIN-ը ԱՍԿ-ի Pos տերմինալի միջոցով,

2.3 Հեռահար գործողություն կատարելու համար Հաճախորդը պետք է կատարի ներքնոշյալ գործողությունները.

2.3.1 ԱՍԿ-ների, Մատակարարի հավելվածներում կամ Բջջային հավելվածի հետ համագործակցող ինտերնետային կայքերում (web հարթակներում) ընտրում է ապրանքը կամ ծառայությունը,

որը ցանկանում է գնել Բջջային հավելվածում գրանցված թվայնացված քարտի օգտագործմամբ:

2.3.2 ստուգում է վճարման ենթակա գումարը և այլ մանրամասներ:

2.3.3 Բջջային հավելվածում ընտրում է համապատասխան թվայնացված քարտի էլեկտրոնային պատկերը, որով կկատարվի վճարման գործարքը:

2.3.4 հաստատում է վճարման գործարքը թվայնացված քարտի միջոցով՝ Բջջային հավելվածում մուտքագրելով նույնականացման տվյալները:

2.3.5 թվայնացված քարտի միջոցով գործարքը կատարելու վերաբերյալ Հաճախորդի հանձնարարականի հաստատումը հանդիսանում է Բջջային հավելվածում նույնականացման տվյալների մուտքագրումը:

3. **Բանկի պարտավորությունները և իրավունքները**

3.1 Բանկը պարտավոր է՝

3.1.1 Ապահովել Թվայնացված Քարտի սպասարկումը՝ վճարահաշվարկային համակարգերի կողմից ընդունված կանոնների համաձայն և տրամադրել Հաճախորդին շուրջօրյա աջակցություն՝ 86 86 կամ +374-8000-8686 հեռախոսահամարներով,

3.1.2 Բջջային սարքի կորստի դեպքում, նույնականացման տվյալների կամ թոքենիզացված քարտի տվյալների գողության կամ երրորդ անձանց կողմից դրանց հասանելիության ձեռք բերման վերաբերյալ հաճախորդից ահազանգ ստանալուն պես՝ կատարել Քարտի բլոկավորում,

3.1.3 ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով սահմանված կարգով պահպանել հաճախորդի վերաբերյալ իրեն հայտնի դարձած բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները:

3.2 Բանկն իրավունք ունի՝

3.2.1 Բանկը միակողմանի կարող է մերժել քարտի թվայնացումը վերջինիս բլոկավորված, զեղծարարության կասկածների առկայության և այլ դեպքերում:

3.2.2 Մերժել Քարտով գործարքների իրականացումը, եթե պահանջվող գումարը գերազանցում է Քարտի Վճարային սահմանաչափը:

3.2.3 Հաշվի դրամական միջոցների նկատմամբ ՀՀ օրենսդրութամբ սահմանված դեպքերում և կարգով կիրառել սահմանափակումներ դատական, հարկադիր կատարման և հարկային մարմինների որոշումների հիման վրա:

3.2.4 Անակցեպտ կարգով Քարտի հաշվից գանձել Սակագներով սահմանված վճարները, հաշվանցել Բանկի նկատմամբ հաճախորդի ունեցած դեբիտորական, վարկային և դրամական այլ պարտավորությունները:

4. **Հաճախորդի պարտավորությունները և իրավունքները**

4.1 Հաճախորդը պարտավոր է՝

4.1.1 Քարտի թվայնացումից առաջ ծանոթանալ թվայնացված վճարային քարտերով իրականացվող գործարքների ընդհանուր պայմաններին և պահպանել դրանցով սահմանված բոլոր կանոնները և պահանջները:

4.1.2 Բջջային սարքի կորստի դեպքում, նույնականացման տվյալների կամ թոքենիզացված քարտի տվյալների գողության կամ երրորդ անձանց կողմից դրանց հասանելիության ձեռք բերման դեպքում, հաճախորդը պետք է անհապաղ դիմի Բանկ թոքենիզացված վճարային քարտ/եր/ը բոլոկավորելու համար:

4.1.3 Մատակարարի կամ 3-րդ անձ հանդիսացող ընկերությունների հետ Հաճախորդը կարող է ունենալ այլ պայմաններ կամ պայմանագրեր, որոնցով սահմանված դրույթների կատարումը պատրադիր է Հաճախորդի համար:

4.2 Հաճախորդն իրավունք ունի՝

4.2.1 Թվայնացված քարտի միջոցով Բջջային հավելվածում և/կամ Վճարային դրամապանակում կատարել հեռավար և/կամ անհպում գործարքներ,

4.2.2 թոքենացել մեկից ավելի քարտեր,

4.2.3 Բողոքարկել քարտային հաշվով կատարված գործարքները Պայմաններով սահմանված կարգով և ժամկետներում:

5. **Պատասխանատվությունը.**

5.1 Բանկը պատասխանատվություն չի կրում Բջջային սարքի մատակարարի կամ այլ 3-րդ անձի կողմից առաջարկվող ծառայությունների օգտագործման միջոցով թոքենացված քարտով իրականացված չթույլատրված գործարքների կամ գործարքների փորձերի համար,

5.2 Բջջային սարքի կորստի դեպքում, նույնականացման տվյալների կամ թոքենիզացված քարտի տվյալների գողության կամ երրորդ անձանց կողմից դրանց հասանելիության ձեռք բերման վերաբերյալ, հաճախորդի կողմից Բանկին չտեղեկացնելու դեպքում վերջինս պատասխանատվություն չի կրում թոքենիզացված քարտի միջոցով կատարված գործարքների համար:

5.3 Բանկը պատասխանատվություն չի կրում 3-րդ անձ հանդիսացող ընկերությունների աշխատանքների ընհատումների, անսարքությունների կամ խափանումների համար: